

BACCALAURÉAT GÉNÉRAL

SESSION 2015

ARMÉNIEN

VENDREDI 19 JUIN 2015

LANGUE VIVANTE 1

Série **L** – Durée de l'épreuve : **3 heures** – coefficient : **4**

Séries **ES-S** – Durée de l'épreuve : **3 heures** – coefficient : **3**

Le candidat indiquera en haut de sa copie s'il compose en arménien occidental ou en arménien oriental.

L'usage des calculatrices électroniques et du dictionnaire est interdit.

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

Répartition des points

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

Վարպետ կը փոխեմ

Հոն ուր կ'աշխատիմ հիմա՝ բաւականին ընդարձակ գործատեղի մըն է, մեծ
խանութի մը վերնայարկը «Համիտիէ» կոչուող փակ շուկային մէջ: Թէ՛ խանութը,
թէ՛ վայրը եւ թէ մեր կարած կօշիկները շքեղ¹ կը համարուին եւ անուն ունին
5 ամբողջ Դամասկոսի մէջ: Բախտ մըն է ինծի համար հոն աշկերտ² մտնելը, կը
պարտիմ ընկերոջ մը ջերմ բարեխօսութեան:

Գործատեղին գրաւած են 6-7 կօշկակարներ, որոնք նստած են քովի քով եւ դէմ առ
դէմ իրենց փոքրիկ գործասեղաններուն առջեւ: Անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր
մէկ կամ երկու աշկերտը: Վարը, խանութին մէջ, երկու վարպետներ կօշիկի
10 երեսներն ու կաշիները կը ձեւեն ու վեր կը դրկեն: Կօշկակարները կ'աշխատին
գործի գլուխ. քանի գոյգ որ կարեն՝ շաբթուան վերջը ասոր համաձայն վարձք կը
ստանան: Այդ պատճառով ալ աշկերտներուն դերը շատ կարեւոր է հոս. անոնք
կարելի եղածին չափ շուտ պէտք է սորվին հիմնական քանի մը կարեր, որպէսզի
կարենան օգնել կօշիկի արագ արտադրման³: Արհեստ սորվելու համար իտեալ տեղ
15 է. կարէ ու կարէ. կողմնակի գործերով ժամավաճառ ըլլալ չկայ:

Իմ վարպետս, պարոն Վարդան, համակրելի երիտասարդ մըն է,
մտաւորականի⁴ երեւոյթով եւ հետաքրքրութիւններով: Կօշկակարներու յատուկ
գոեհկաբանութիւններ⁵ չունի շրթներուն վրայ եւ բամբասանքներ⁶ շատ

¹ շքեղ - élégant

² աշկերտ - apprenti

³ արտադրում - production

⁴ մտաւորական - intellectuel

⁵ գորեհկանանութիւն - vulgarité

⁶ բամբասանք - rumeur, ragot

Նախորժիր: Թերեւս այդ իսկ պատճառով գործատեղիին անպաշտօն վերակացուն⁷
20 է կարծես: Ընդհանուրին վերաբերող հրամաններու գործադրութիւնը իրեն կը
վստահին եւ կը խնդրեն, որ բորբոքած⁸ մտքերը հանդարտեցնէ վեճերու
պարագային:

Պարոն Վարդանի միակ աշկերտը ես եմ: Վրաս մեծ յոյսեր դրած է եւ
առաջին օրէն իսկ ամէն ճիգ մը թափէ, որ արհեստիս մէջ առաջ երթամ:

25 - Նախորդը, կ'ըսէ անպիտան մէկը դուրս եկաւ: Բնաւ վստահելի չէր, սուտ
կը խօսէր եւ գողութիւն կ'ընէր:

Ո՛չ, ես նման բաներ չեմ ըներ, կրնայ վստահ ըլլալ: Միայն թէ ... պիտի
կրնամ արդարացնել իր յոյսերը գործի ասպարեզին մէջ: Փայլուն չեն
ընդունակութիւններս. դանդաղ եմ եւ ցրուած:

30 - Միտքդ ուրիշ տեղ է, կը հաստատէ ինք ալ, քանի մը օր ետք:

Իրաւունք ունի, միտքս ուրիշ տեղ է: Ես կոչում չունիմ կօշկակարութեան: Ասեղը
կաշիէն անցուցած միջոցիս ուսումնարան եւ մատենադարան կ'երագնէ: Միտքս կը
նաւարկէ ոսկեգօծ ափունքներով⁹ կապոյտ ջուրերու վրայ: Ի՞նչպէս բացատրեմ,
ի՞նչպէս արդարացնեմ ինքզինքս: Ինծի համար իսկ անբացատրելի կը մնան այդ
35 երագները, որոնք տեղ չունին անշուշտ կօշկակարի գործատեղիին մէջ: Չեմ ուզեր
խոստովանիլ, սակայն անորոշ կերպով կը զգամ, թէ ես երբեք լաւ արհեստաւոր մը
պիտի չըլլամ: Ուրի՞շ բան ... ո՞վ գիտէ:

Հակառակ հիմնական այս թերութիւններու¹⁰ Պարոն Վարդան կը սիրէ զիս:
[...] Ուսման չգոհացուած ծարաւ մը կայ այս մարդուն մէջ: Կարդացած է քանի մը
40 վէպեր եւ Պէյրութէն «Ազդակ» թերթը կը ստանայ: Ինծի հետ խօսած ատեն, յաճախ
հարցումներ կ'ընէ իր չզիտցած խնդիրներու մասին, ինչ որ կը շոյէ իմ
ինքնասիրութիւնս: Վարդանին աչքին եւ կարեւոր մէկն եմ եւ իր վրայ
գերազանցութիւն¹¹ մը ունիմ – վկայականս:

⁷ վերակացու - surveillant

⁸ բորբոքած - enflammé, excité

⁹ ափունք – rive, rivage

¹⁰ թերութիւն – inconvéniént, défaut

¹¹ գերազանցութիւն - superiorité

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Ինչպիսի՞ տեղ մը կը գտնուի կօշկակարութեան գործատեղին:
2. Աշկերտները այս աշխատանոցին մէջ ինչո՞ւ կարելոր դեր կը կատարեն:
3. Նկարագրեցէք վարպետ Պարոն Վարդանը մի քանի նախադասութիւնով:
4. Պատմողը գո՞հ է իր սորված արհեստէն:
5. Պարոն Վարդանը իր ազատ ժամերուն ինչո՞վ կը հետաքրքրուի:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Traitez les deux sujets. (120 mots minimum pour chaque question)

1. Նկարագրեցէք Պարոն Վարդանին եւ պատմողին միջեւ յարաբերութիւնը եւ բացատրեցէք թէ ձեր կարծիքով վարպետ-աշկերտ կապը ի՞նչպէս պետք է ըլլայ :
2. Բացատրեցէ՛ք թէ ձեզի համար արհեստ մը ընտրելու չափանիշները ի՞նչ են: Կը հաւատա՞ք կոչումի գաղափարին:

Վարպետ եմ փոխում

Այնտեղ, ուր աշխատում եմ հիմա, բավականին ընդարձակ աշխատատեղի է, մի
մեծ խանութի վերնահարկում, «Համիդիե» կոչվող փակ շուկայի մեջ: Թե՛ խանութը,
թե՛ վայրը եւ թե՛ մեր կարած կոշիկները շքեղ¹ են համարվում եւ անուն ունեն
5 ամբողջ Դամասկոսի մեջ: Բախտ է ինձ համար այնտեղ որպես աշկերտ² մտնելը,
պարտավոր եմ մի ընկերոջ ջերմ բարեխոսությանը:

Աշխատեղին գրավել են 6-7 կոշկակարներ, որոնք նստած են կողք կողքի եւ դեմ առ
դեմ իրենց փոքրիկ գործասեղանների առջեւ: Նրանցից յուրաքանչյուրը ունի մեկ
կամ երկու աշակերտ: Ներքեւում, խանութի մեջ, երկու վարպետ կոշիկի երեսներն
10 ու կաշիներն են ձեւում ու վերել ուղարկում: Կոշկակարները վճարվում են գործին
համապատասխան. քանի գույզ որ կարեն, շաբթվա վերջին դրան
համապատասխան աշխատավարձ են ստանում: Այդ պատճառով էլ աշկերտների
դերը շատ կարեւոր է այստեղ. նրանք հնարավորին չափ շուտ պետք է սովորեն
հիմնական մի քանի կարերը, որպեսզի կարողանան օգնել կոշիկի արագ
15 արտադրմանը³: Արհեստ սովորելու համար իդեալական տեղ է. կարիք ու կարիք.
կողմնակի գործերով ժամավաճառ չի լինում:

Իմ վարպետը, պարոն Վարդանը, համակրելի մի երիտասարդ է,
մտավորականի⁴ տեսքով եւ հետաքրքրություններով: Կոշկակարներին հատուկ
գոեհկաբանություններ⁵ չունի շուրթերի վրա եւ բամբասանքներ⁶ շատ չի սիրում:

¹ շքեղ - élégant

² աշակերտ - apprenti

³ արտադրում - production

⁴ մտավորական - intellectuel

⁵ գոեհկաբանություն - vulgarité

⁶ բամբասանք - rumeur, ragot

20 Թերեւս այդ իսկ պատճառով աշխատատեղի անպաշտոն վերակացուն⁷ է կարծես:
Ընդհանուրին վերաբերող հրամանների գործադրումը իրեն են վստահում եւ
խնդրում են, որ բորբոքված⁸ մտքերը հանդարտեցնի վեճերի պարագայում:

Պարոն Վարդանի միակ աշկերտը եւ եմ: Վրաս մեծ հույսեր է դրել եւ
առաջին օրվանից իսկ ամեն ճիգ թափում է, որ արհեստիս մեջ առաջ գնամ:

25 - Նախորդը, ասում է, անպիտանի մեկը դուրս եկավ: Բոլորովին վստահելի
չէր, սուտ էր խոսում եւ գողություն էր անում:

Ո՛չ, ես նման բաներ չեմ անում, կարող է վստահ լինել: Միայն թե ... պիտի
կարողանա՞մ արդարացնել իր հույսերը գործի ասպարեզում: Փայլուն չեն
ընդունակություններս. դանդաղաշարժ եմ եւ ցրված:

30 - Միտքդ ուրիշ տեղ է, հաստատում է ինքն էլ, մի քանի օր հետո:

Իրավունք ունի, միտքս ուրիշ տեղ է: Ես կոշկակարության կոչում չունեմ: Ասեղը
կաշվի մեջ մտցնելու ընթացքում ուսումնարանի եւ մատենադարանի մասին եմ
երագում: Միտքս նավարկում է ոսկեզօծ ավերով⁹ կապույտ ջրերի վրա: Ինչպե՞ս
բացատրեմ, ինչպե՞ս արդարացնեմ ինքս ինձ: Ինձ համար իսկ անբացատրելի են
35 մնում այդ երագները, որոնք տեղ չունեն անշուշտ կոշկակարի աշխատավայրում:
Չեմ ուզում խոստովանել սակայն, որ անորոշ կերպով զգում եմ, թե ես երբեք լավ
արհեստավոր չպիտի լինեմ: Ուրի՞շ բան ... ո՞վ գիտի:

Հակառակ հիմնական այս թերություններիս¹⁰՝ Պարոն Վարդանը սիրում է
ինձ: [...] Ուսման չգոհացված մի ծարավ կա այս մարդու մեջ: Կարդացել է մի քանի
40 վեպ եւ Բեյրութից «Ազդակ» թերթն է ստանում: Ինձ հետ խոսելու պահին հաճախ
հարցումներ է անում իր չիմացած խնդիրների մասին, ինչը որ շոյում է իմ
ինքնասիրություն: Վարդանի աչքին ես կարեւոր մեկն եմ եւ իր վրա
գերազանցություն¹¹ ունեմ՝ վկայականս:

⁷ վերակացու - surveillant

⁸ բորբոքված - enflammé, excité

⁹ ավի - rive, rivage

¹⁰ թերություն - inconvenient, défaut

¹¹ գերազանցություն - superiorité

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Ինչպիսի՞ տեղում է գտնվում կոշկակարության աշխատատեղին:
2. Աշկերտները այս աշխատավայրում ինչո՞ւ են կարելուր դեր կատարում:
3. Նկարագրեք վարպետ Վարդանին մի քանի նախադասությամբ:
4. Պատմողը գո՞հ է իր սովորած արհեստից:
5. Պարոն Վարդանը իր ազատ ժամերին ինչո՞վ է հետաքրքրվում:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Traitez les deux sujets. (120 mots minimum pour chaque question)

1. Նկարագրեք, թե ինչ հարաբերություններ են Պարոն Վարդանի եւ պատմողի միջեւ:
2. Բացատրե՛ք թե ձեզ համար արհեստ ընտրելու չափանիշները որո՞ք են: Հավատում եք կոշումի գաղափարին: